ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-20/24 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով մետաղական ցանցի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 10 հունիսի 2020թ.

ժամը. 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Հ. Նոնինյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

Գ. Խոսրովյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման մասին

(Մ. Առաքելյան)

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-20/24» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով մետաղական ցանցի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում, 2020 թվականի հունիսի 10-ին, ժամը 11:00-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց ցեմենտի և պատրաստի բետոնի շաղախի գնման նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	մետաղական ցանց	75000 (յոթանասունհինգ հազար)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-20/24» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«Էկոտենդեր» ՍՊԸ
2	«ՅԱՆ ՎԷՍ-Ա» ՍՊԸ
3	ԱՁ «Նորիկ Հակոբջանյան»

1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակիցները www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել էին հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

«Էկոտենդեր» ՍՊ, «ՅԱՆ ՎԷՍ-Ա» ՍՊ ընկերությունների և «Նորիկ Հակոբջանյան» ԱՁ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակիցների առաջարկած գինը

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	«Էկոտենդեր» ՍՊԸ	1200000	1200000
2	«ՅԱՆ ՎԷՍ-Ա» ՍՊԸ	91667	110000
3	ԱՁ «Նորիկ Հակոբջանյան»	87500	105000

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակիցների փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում «Էկոտենդեր» ՍՊ, «ՅԱՆ ՎԷՍ-Ա» ՍՊ ընկերությունների և «Նորիկ Հակոբջանյան» ԱՁ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել և գնահատվել են բավարար: Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ընդգրկված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Էկոտենդեր» ՍՊ, «ՅԱՆ ՎԷՍ-Ա» ՍՊ ընկերությունների և «Նորիկ Հակոբջանյան» ԱՁ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.6 Բանակցությունների վարման մասին:

Քանի որ մասնակիցների առաջարկած գները գերազանցում են գնման հայտով նախատեսված նախահաշվային գները, գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.7 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-20/24» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել մասնակիցների բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Հ. Նոնինյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան